№ 21 ԹԷՀԵՐԱՆ ՇԱԲԱԹ 21 ՄԱՅԻՍԻ 1894 № 21

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ՇԱՒԻՂ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

„ՇԱՒԻՂԼ“ ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 50 ՀԱՄԱՐ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

«ՇԱՒԻՂԻ» Տարեկան գինը 10 ղրան, կէս տարուանը 6 ղրան: Արտասահմանի համարները 5 շահիական արտասահմանում տարեկան 8 ֆրանկ կամ 3 ռուբլի, կէս տարուանը 5 ֆր. կամ 2 ռուբլի: Թէհրանում գրւում են միմիայն խմբագրարանի մէջ: Մեր հասցէն, Téhéran Rédaction CHAVIGH,

«ՇԱՒԻՂԻ» խմբագրութիւնը բաց է առաւօտեան 8—4 ժամը: Կիրակի եւ տօն օրերը 10—2 ժամը: Յայտարարութիւն ընդունւում է ամեն լեզուով: Յայտարարութիւնների համար վճարում են փոքրագոյն բառին 1 շահի:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Նոր Զուղայի ազգային հաստատութիւնները.— ԵՒՐՈՊԱՅԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հասարակութեան լուսաւորութեան գիտնականների մէջ Եմմանուէլի ազգային հաստատութիւնների հաշիւ պոռնիկ. Նամակ Դաւիթէ, Նամակ խմբագրութեանց Նիւրին լուրեր. —ՎԵՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.— ԲՈՒԱԶ.

ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ ՆԵՐԸ

—

Ընթերցողը կարող է կարդալ մեր ներքին տեսութեան բաժնում Ն. Զուղայի ազգային հաստատութեանց հաշիւների մասին մեր տուած տեղեկութիւնը: Մենք այժմ կամենում ենք մի քանի կողմնակի ակնարկներ անել այդ մասին:

Որպէս երևում է հաշուեցուցակից, ամեն հաստատութիւն ունի Ն. Զուղայում իւր առանձին ելք ու մուտքը, հաշուետեսները, պարտ ու պահանջը, և այլն: Կեդրոնական վարժարանը նմանապէս ունի իւր առանձին բիւդճէն, որ մեզ շատ հարուստ չէ երևում, և մի նպաստ չի ստանում տեղական եկեղեցիներից, որոնք ամենքը ունին առանձին ապահովուած դրամագլուխ, և տարեվերջին մուտքի աւելորդ: Մենք ակնկալում ենք որ Կեդրոնական վարժարանը դառնայ մի տեսակ թեմական դպրոց, և իսկապէս կեդրոնական վարժարան իւր թեմի, որ կարողանայ շրջակայ գիւղերից մի որոշ թիւ գիշերօթիկ աշակերտներ պահել, որ ունենայ կանոնաւոր բարձր դասարաններ, և մի վարժապետանոց դառնայ ամբողջ թեմի ուսուցիչներից զուրկ գիւղերի և քաղաքների համար: Այս տեսակ դիրք գրաւելու համար նա պէտք է ուսուցիչների մի առելի մեծ և ընտիր թիւ ունենայ, և ի հարկէ այդ չէ կարող լինել միայն տարեկան հազար թումանաչափ ռոճկով որ այժմ յատկացուած է Կեդրոնական ուսումնարանին: Պէտք է ստեղծել եկամուտի նոր աղբիւրներ, յատկացնել ուրիշ սովմնարանին եկեղեցիների մուտքերի աւելորդը, դիմել տեղական հասարակութեան նպաստներին, և Հնդկաստանի Հարուստ Հայերին և նոյն տեսի զանազան հաստատութեանց, որոնք ուրախութեամբ աջակից կը զանուին, կարծում ենք մենք, վարժարանին մի բարձր դիրք տալու համար: Ն. Զուղայի Կեդրոնական վարժարանին վիճակուած է մի մեծ դեր խաղալ շրջակայ գիւղերի զարգացման գործում, և լուսով ենք որ հոգևոր իշխանութիւնը որպէս և Զուղայի և Հնդկաստանի Հայերը ուշադրութեան կառնեն այս հանգամանքը:

Յաւելով տեսնում ենք, մ անգամ ևս, որ ինչոր մենք գրած էինք մի քանի ամիս առաջ Ն. Զուղայի Հայերի մէջ հասարակական ոգու բացակայութեան մասին, դարձեալ հաստատւում է նոր փորձով: Տեղական հասարակութիւնը 1893 տարու ընթացքում միայն 680 ղրանով (մնացորդ նախորդ տարւայ հանգանակութեան) մասնակցել է իւր հաստատութեանց հասոյթներին. դպրոցական վճարը,—մէկ շահի չը կայ, նուէրներ ուսումնարանին. —ոչինչ: Մենք չենք հասկանում թէ ինչու վարժարանի հոգաբարձութեան մէջ այնքան քիչ մասնակցութիւն ունի ժողովուրդը, և նոյն իսկ հոգաբարձութիւնը այնքան փոքրաթիւ է: Չենք հասկանում թէ ինչու ունևոր ծնողներից դպրոցական տուրք չէ պահանջւում, որչափ ևս փոքրը լինի այն, որպէս գի հանրակութիւնը կամաց կամաց վճարժուի վճարել իւր զաւակների ուսման համար:

ՆԵՌՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ, ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ ՄԻՈՒ ՋՈՑՆԵՐԻՑ ՄԷԿԸ

ԵՐԵՎԱՆ

Ազգերի բազմակողմանի դաստիարակման ընթացքում երևան են գալիս երկու խիստ որոշ, բնորոշ յաջորդական երևոյթ, այն է անկումն և վերածնութիւն: Դարերի ընթացքում յարակցութեան շարքում ազգերը կուլտուրապէս ենթարկւում էին զանազան լեզաշրջումների, ոչ մի երևոյթ, ոչ մի հրճակութիւն դրոշմուած չէ յաւիտենական անփոփոխութեան կնիքով. հէնց նոյն իսկ ծնունդ կամ մեռնել նշանակում է այլափոխուել բնութեան մէջ ոչ մի ծառայել, զարգացման ոչ մի շրջան ջերմ չէ կարող մնալ ֆիզիկական յարափոփոխութիւնից, այդ միևնոյն երևոյթը պարզորոշ կերպով տուաջ է գալիս ազգերի կամ մարդկային բարոյա-մտաւոր զարգացման ընթացքում:

Այսպիսի բնական անխոսնափելի օրէնքների հիմանց վրայ հաստատւում է այն տեսութիւնը, թէ ազգերի քաղաքակրթութեան հիմնական պայմանը, նոցա լուսաւորութեան և առաջադիմական կարողութիւնների զարգացումը պահանջում է ներգործուել այդ փոփոխման օրէնքից, առանց այդ կարևոր փոփոխութեան, ազգերն անհետանում են:

Յենլտնելով այս ճշմարիտ, բնական և ամենանուաճ ոյժի դերադրական ազդեցութիւնը, գոնցէ շատերը գլխաւորապէս կեղծ ազգասէրներից, դիմակաւոր հնապաշտներից սարսափեն, բայց մեզ համար այդ սարսափն ոչ մի նշանակութիւն չէ կարող ունենալ, մենք ասում ենք այն, ինչ որ մեր համոզմունքն է, ինչ թը ցոյց է տալիս բնական քննախնդրելի օրէնքը, ինչ որ դարերի ընթացքում ցոյց է տուել գիտութիւնը, փորձը և մենք անպայման հետևում ենք այդ ճշմարտութեանը: Հասարակութիւնը, ազգը, ընտանիքը և անհատը, միշտ կարծիքով-անդրդեւելի համոզմունքով միայն և եթէ կարող է լուսաւորուիլ (եթէ անհրաժեշտ կերպով ըմբռնել է այդ ճշմարտութիւնը) իւր ներկայ հնա-

լած, փխած կարգերը, սովորութիւնները և մտածման եղանակները զոհաբերելով այդ օրէնքի բարերար փոփոխիչ գործողութեանը։ Եւ անկաշառ, անկեղծ, սրրտացաւ մամուլի պաշտօնն է ժողովրդին առաջնորդել դէպի այդ բուժարանը։

Եզրափակենք մեր խօսքը. գիտութեան, արհեստների և բոլոր ազատական արուեստների բուն, հիմնական նպատակն է մարդկային բարձրագոյն, երջանիկ կեանքը, այդ նպատակին հասնում ենք մենք վերածնուելով այդ լուսաւոր աւազանի մէջ, հոգեպէս և մտաւորապէս փոփոխուելով, հնից խպառ մաքրուելով և ընծայուելով նոր—առողջ գործունէութեան. իսկ այդ գործունէութեան մէջ յարատևելու առաջնորդող միջոցներից մէկը գլխաւորապէս մամուլն է։

Թ.

Դավրէժ 1894 թիւ.

ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՇԻՒ ԱՌԹԻՒ

Խմբագրութիւնս շնորհակալութեամբ ստացաւ Ն. Ջուղայի ազգային հաստատութեանց տարեկան հաշիւների համառօտութիւնը, առանձին տետրակով տպագրուած։ Այս գովելի սովորութիւնը, այսինքն հրապարակական հաշուետուութիւնը, որ Եսայի Սրբազանը մտցրել է Ն. Ջուղայի հաստատութեանց մէջ, մի կարևոր և օրինակելի գործ է։ Մի ակնարկ միայն այդ հաշուեցուցակի վրայ աւելի լաւ կը ծանօթացնէ ընթերցողին տեղական գործերի հետ, քան թէ հարիւրաւոր ուռած փքուած յօդուածներ։ Թուանշանների փաստերը ամենից անհերքելի փաստերն են։

Ինչպէս երևում է հաշիւներից, ըսկսեալ 1860 թուականից վանքային գործերը շատ անկանոնութեամբ են կառավարուած, գոնէ դրամական տեսակէտից։ Ն. Ջուղայու գրեթէ բոլոր հաստատութիւնները, այդ թուականից սկսած, պահանջներ ունին ամեն կարգի անհատներից։ Ընթերցողը փորձւում է կարծել որ այդ հաստատութիւնները, եկեղեցի վանք, դպրոց, մէկ մէկ բանկային հաստատութիւններ են, որ այդքան մարդկանց դրամ են փոխ տուել։ Ի հարկէ, երբերի մի այդպիսի վիճակում, այն Առաջնորդը որ կը փորձէ այդքան տարիների հնացած պարտքերը գանձել, չէ կարող պարտականների աչքի լոյսը լինել։ Վճարելը միշտ մի տհաճելի պարտականութիւն է այնպիսիների համար, որոնք ազգային սնտուկը իւրեանց ժառանգական սեպհականութիւն են համարել։ Այդ մանր մզկիր փոխատուութեանց համագումարը, առանց տոկոսի, է 20105 ղռան։

Վանքի եկամուտները բարգաւաճ վիճակի մէջ են երևում։ Երեք վերջին տարիների մուտքի գումարն է 97,518 ղռան, այն ինչ նախնթաց 3 տարիների մուտքը եղած է 34,992 ղռան։ Այս ահագին տարբերութիւնը ցոյց է տալիս թէ լուրջ և կանոնաւոր վարչութիւնը ինչ արդիւնքներ կարող է տալ, և մեր ազգային առանց այն էլ փոխ դրամները ինչպէս են վատնւում երբոր լաւ կառավարչութիւն չը կայ։

Ն. Ջուղայի բոլոր հաստատութեանց ընդհանուր տարեկան մուտք և ելքը մօտաւորապէս լինում է 10,000 թումանի։ Կենդրոնական վարժարանի մուտքը 33,611 ղռան, իսկ ելքը 33,413 ղռան. այս գումարից միայն 9716 ղռան ուսուցիչների վարձ։ Աղքատաց Արկղի մուտքը 3628 ղռան, ելքը 2773 ղռան։ Մեզ զարմացնում է տարուայ ընթացքում աղքատներին բաժանուած գումարի մեծութիւնը, 2505 ղռան, արդեօք այդ կարօտեալները միայն ջուղայեցիներ են, թէ շրջակայ գիւղերի բնակիչներ։ Ջուղան չէ կարող միայն ինքը այդքան աղքատներ ունենալ։ Տպարանի մուտքը 2386 ղ. իսկ ելքը 5386 ղ.։ Ծախքերի աւելացութիւնը նոր բերուած թղթերի պատճառով է։

Ցանկալի կը լինէր որ Ն. Ջուղան ևս հետևելով բոլոր աւելի զարգացած հայ շրջաններին, վերջապէս ձեռք քաշէր գրաբարի գործածութիւնից։ Մի հաշուետուութիւն որ պատրաստուած է հասարակութեան համար, պէտք է գրուած լինի ժողովրդին հասկանալի լեզուով։ Երբ նոյն իսկ Հայրիկը իւր կոնդակը աշխարհաբար լեզուով է գրում, մի՞թէ ջուղայեցիները պէտք է շարունակեն տակաւին աշխարհաբարը անարժան և գռեհիկ լեզու համարել։ Նոյնպէս ցանկալի էր որ հաշիւը տումարական ձև ունենար, երկու էջով, առանձին էջ ամեն մէկ հաշուի համար, ոչ թէ ելքը մուտքի տակ գրուած։

ՆԱՄԱԿ ԴԱՎՐԷԺԻՑ

4 մայիսի 1894

Ապրիլ 22-ին տեղի ունեցաւ Բերդաթաղի թատրոնական սրահում յօգուտ ընթերցասիրաց ընկերութեան և բեմի մի ներկայացում, նախաձեռնութեամբ նոյն ընկերութեան անդամների։

Խաղացին „Մէլէք“ հեղինակութիւն Փոնեանցի, „Երեք քաջեր“ և „Աւազակներ“ Բէշիկթաշլեանի։ Անտրակտներում նուագում էր զինւորական երաժշտական խումբը, իսկ օրիորդ Շմիտը, խնդրանօք վարչութեան, նուագում էր դաշնամուրի վրայ։ Տոմսակները բոլորն էլ վաճառուած էին. Ներկայացումը անցաւ շատ ուրախ։ Ապրիլ 17-ին Թիֆլիսից Դավրէժ հասան երկու ինժիններներ, որոնք մեզ մօտ մի քանի օր հիւր մնալուց յետոյ ուղևորուեցան Արտաբիլ։ Յիշեալ պարոնները պէտք է գնան Աստարայի ճանապարհը ուսումնասիրելու և մի նախագիծ ներկայացնելու ռուսաց և պարսից կառավարութիւններին, որոնք մտադիր են այդ ճանապարհը շինելու իրենց ծախքով վաճառականական իրթևեկութիւնները դիւրացնելու համար։

Ապրիլ 30-ին թատերասէրները տուին մի ներկայացում հայուհեաց ընկերութեան օգտին։ Խաղացին Մոլիէրի „Երեք ցանկութիւն“ թարգ. պ. Ա. Փանուէլեանցի, Փառնակեսի „200,000“ և մի Ջաւեշտ։ Թատրոնական սրահը ծածկուած էր գեղեցիկ գորգերով։ Սրահը և բուֆէտը կառավարում էին ընկերութեան վարչութեան անդամուհիները։ Ներկայ էր ռուսաց հիւպատոսը իւր ամբողջ ընտանիքով և ուրիշ շատ եւրոպացիներ։ Բակումը նուագում էր զինւորական երաժշտական խումբը անտրակտներում։ Տոմսակները բոլորն էլ մի օրուայ մէջ սպառուեցան։

Ներկայացումը ընդհանրապէս անցաւ թոյլ, որովհետև դերակատարները ոչ թէ զբաղուած էին իրանց դերերը սովորելու, այլ մեզ մօտ յայտնի մի քանի շահագէտ և ուսումնական պարոնների դէմ կռիւ մղելով։ Այն պարոնները որոնք կանանց ընկերութեան և միրողներին անուանում էին օտար, իսկ ուսումնարանի աշակերտներին տէր թատրոնական սրահին, դեռ պասցին առաջ աշակերտները պէտք է խաղան, յետոյ դուք, բայց յետոյ համաձայնուեցան, որ կանանց ընկերութիւնը առաջ տայ իւր ներկայացումը, յետոյ տան աշակերտները։ Այսպիսի համաձայնութիւնից յետոյ ինչ անեն, որ աշակերտներն առաջ խաղան։ Կանանց ընկերութեան ներկայացումից երեք օր առաջ յայտնում են ընկերութեան, որ մուտքի մի երրորդը պէտք է յատկացնեն Բերդաթաղի ուսումնարանին։ Երբ մերժուեցան կանանց ընկերութեան կողմից 18 անդամուհիների ստորագրութեամբ, և կանանց ընկերութիւնը ձեռնարկեց և նորոգեց Լիլաւայի բեմը, այսինքն ինչքան, որ նոքա պէտք է ստանային, ծախսեց Լիլաւայի բեմի վրայ, այսպէս վնասելուց յետոյ նոր համաձայնուեցան ձրի տալու բեմը՝

Այնպէս որ ես ոչ մի կերպով չեմ կարող մեղադրել սիրողներին, թէ նոքա իրանց դերերը չէին սովորել։ Աւելի մեղադրելի են այն պարոնները որոնք աշխատում էին խանգարել կանոնից ընկերութեան ներկայացումը։

Զուռնաշտը բաղկացած էր հետեւեալ երգերից. Հէրիք որդեակ՝ սոլօ և խմբական. Սիփնայ սարեր՝ խմբական, Հազար երանի. Գ.Ք. սոլօ։ Առաջին երկու երգերը երգուեցան մչեցու տարազով, իսկ Հազար երանի երգը սոլօ երգեց պ. Ե. Ղազարեան, որին ձայնակցում էր դաշնամուրը։ Դաշնամուրի վերայ նուագում էր օրիորդ Շմիդտը. Հասարակութիւնը ցրուեց շատ գոհ սրտով, իւր շնորհակալութիւնը յայտնելով անդամուհիներին։ Մուտք ենթադրւում է 100 թուման։

(Հասօ)

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ *)

Թէհրան 15 մայիս 1894

Վեհափառ Հայրիկի սովեալների համար հանած սրտաշարժ կոնդակը կարդալով, մարդս զգացւում է և չէ կարողանում զսպել իւր աչքերի արտասուքը, ընկնում է ինքնամոռացութեան մէջ և հազարաւոր մտածողութիւններ պաշարում են միտքը։ Մեր հայրենակից եղբայրները սովից տանջւում են և ով գիտէ օրական որքան զոհեր են տալիս, և այդ խեղճ, գաղթական, սովից տանջւող ժողովրդին ազատելու համար, հայոց պաշտելի Հայրիկը նկարագրում է նոցա քաշած նեղութիւնները, տառապանքը և կրած զրկանքները և խօսելով ժողովրդի բերանով, իրան, իբրև նոցա ձեռքը կարկառում է անհատների, ողորմութիւն հայցելու։ Մտածում է այդ ինքնամոռացութեան մատնուած մարդը, բայց ինչ կարող է անել մի անհատ, որ ցանկանում է օգնել, ցանկանում է իւր ունեցած հացի կէսը տալ այդ սովեալ եղբայրներին, բայց ինչպէս, ինչ միջոցով, չը գիտէ, անցնում են մի քանի րոպէներ նա մոռանում է ամեն բան և ինկնում է իւր ապրուստի սուղ միջոցները հայթայթելու մտածողութեան մէջ։

Նա մասամբ էլ իրաւունք ունի, այսպիսի դէպքերում, ըստ իս, մի անհատ չէ կարող ուղղակի անել այն՝ ինչ որ կարող է անել մի որ և իցէ ազգային հիմնարկութեան պաշտօնական մի մարմին։ Ազգային հիմնարկութիւնները վարող մարմինները, յանուն ազգի, կարող են այս դէպքում շատ մեծ գործ տեսնել, կարող են հանգանակութիւն բանալ, կարող են դրամ հաւաքել ժողովրդից, և հասցնել հայոց Հայրիկին որ բաժանէ „այն բազմաթիւ Ղազարոսներուն, որոնք Էջմիածնայ տաճարին տակ շարուած սպասում են կոչնակի ձայնին“։

Օրինակ, Թէհրանում այժմ կան շատ հաստատութիւններ, բայց ամենից մեծը, ամենից աչքի ընկնողը, այսօր, երկու թաղի ուսումնարաններն են, ցանկալի է որ այդ ուսումնարանների վարող մարմինները ուշադրութիւն դարձնեն այդ կէտի վերայ և մի րոպէ հեռու մղեն իրանցից կուսակցութեան ոգին։ Թող յանուն սովեալ եղբարց միանան և իրանց միջից ընտրեն Սովելոց մի յանձնաժողով, յանձնեն նորան մի մասնաւոր մատեան և նա սկսէ հանգանակութիւն անել, վստահ լինելով որ ամեն մի անհատ ամենայն սիրով իւր օրական ապրուստի կէսը բաժին կը հանէ մեր սովեալ եղբայրներին։ Եւ լաւ կը լինի որ այդ վարիչ մարմինները որ Սովելոց յանձնախումբը կազմակերպելու են, ի նկատի ունենան նաև իգական սեռը և յանձնախմբի մէջ մտցնեն և հայ կինը, որ կարող է այսպիսի հանգամանքներում գործին շատ նպաստել։ Թէև Թէհրանի մէջ հանգանակուած գումարը չնչին մի բան պէտք է լինի և չէ կարող կշտացնել այն հազարաւոր սովեալներին, որոնք շրջապատած են Վեհափառ Հայրապետին և աղի արտասուք թափելով կոչում են „Հայրիկ հաց չունինք“, բայց կարող է նորանցից մի քանիսին գոնէ մի օր կերակրել։

Մի կարեկից.

*) Հաստատ աղբիւրից լսում ենք որ արդէն տեղւոյս ազգային հաստատութեանց մէջ յղացուել է մի և նոյն միտքը, եւ նոքա միջոցներ են ձեռք առնում՝ միաձայն ջանքերով մի հանգանակութիւն բանալու յօգուտ սովեալներին:

Խմբ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Խմբագրութիւնս շնորհակալութեամբ ստացաւ Վեհափառ Հայրիկի մի նոր աշխատութիւնը „Պապիկ և Թոռնիկ“։ Հայրիկը, իւր ծերութեան հասակում տակաւին շարունակում է ծառայել այն բարձր գաղափարին, որին ներշնչուած է եղել իւր բոլոր կեանքի մէջ գիւղական ժողովրդի բարօրութիւնը։ Այս գիրքն էլ նուիրուած է մի և նոյն նպատակին։ Ընթերցողը կը գտնէ գրքի մէջ բոլոր հարցերը որոնք կապ ունին գիւղական ազգաբնակութեան հետ, և այդ բոլորի վերայ ճառուած է այն պարզ, ամենին հասկանալի, գրաւիչ և յանկուցիչ ոճով, որի գաղտնիքը ինքը Հայրիկը միայն ունի։ Նա խօսում է բարդ տնտեսական հարցերի վերայ մի այնպիսի վճիտ և դիւրըմբռնելի ոճով, որ ամենից հասարակ ընթերցողը կարող է հասկանալ։ Այս մի գիրք որից շատ օգուտ կարող է քաղել պարսկահայ գիւղերի հասարակութիւնը։ Հրաւիրում ենք պարսկահայոց ընթերցասիրական ընկերութիւնների, մամնաւոր կերպով Րաֆֆի ընկերութեան ուշադրութիւնը այդ գրքի վերայ, և յոյս ունինք որ նոքա կաշխատեն հաքիւններով տարածել գիրքը մեր գիւղերի մէջ։ Նորից կը վերադառնանք այդ գրքի մասին խօսելու։

—

Մենք ստացել ենք մի նամակ Թիֆլիսից, որի մէջ մեզ յայտնում են թէ թեմական առաջնորդը արգիլել է կանանց տղամարդկանց հետ միասին կանգնել եկեղեցիներում։ Այդ կարգադրութիւնը մեզ շատ զարմանալի և տարօրինակ է թւում, մինչև այն աստիճան որ դժուարանում ենք հաւատալ այդ լուրին։

—

Նոյնպէս գրում են Թիֆլիսից. „Կովկասեան Հայոց Բարեգործական ընկերութիւնը իւր բազմաթիւ ճիւղերով հանդերձ, որ մինչև այժմ մի անպէտք բան էր կարծւում, Երևանի և Կարսի նահանգներում տարածուած սովի պատճառով, ցոյց տուեց իւր պտուղները։ Եւ ժողովուրդը միայն այժմ հասկացաւ թէ ինչքան օգտակար է մի այդպիսի ընկերութեան գոյութիւնը։ Սովի առաջըն առնելու համար, Կենդրոնական ընկերութիւնը և թէ նորա ճիւղերը գործում են աներևակայելի եռանդով և ամբողջ գիւղեր ազատում սովի սոսկալի ճիրաններից։

—

Դավրէժից մեզ հաղորդում են որ, ապրիլ 28-ին առաւօտեան ժամը 7 ու կէսին տեղի ունեցաւ երկրաշարժ։

—

Ռաշտից մեզ հաղորդում են որ, Թատերասիրաց ընկերութիւնը չէ կարողանում, ընկերութեան փոխ նախագահ մօսիօ Փամփիոնթից ստանալ ներկայացման հաշիւները, յայտնի չէ թէ ինչ պատճառ ունի պարոնը ամբողջ ամիսներ ընկերութեան փողը իւր մօտ պահելու։

—

Նոյն տեղից մեզ հաղորդում են, որ Ընթերցասիրաց ընկերութիւնը, յօգուտ օրիորդական Խրիմեան դպրոցին, դրել է վիճակախաղի 1000 դրան 150 տոմսերով, որոնցից 20 հատը, շահում են, տոմսակները արժեն մի մի թուման։ Էնզելիում 20 տուն հայ ժողովուրդ կայ

և մի եկեղեցի առանց բռնանալի, մօտերիս մի քանի պարանների մէջ միաք է յայտնուել մի զարմաց բանալ, քաղցը է մեզ յուսալ, որ այդ զեղեցիկ միաքը ֆուսով կ'իրականանայ, բայց մենք էլ մեր կողմից խորհուրդ ենք տալիս այդ տեղի երիտասարդներին, որ աշխատեն նաև մի ընթերցարան հիմնել. քանի որ նախ շատ հեշտութեամբ կը յաջողուի այդ նպատակը, երկրորդ՝ երիտասարդները բոլորն էլ ձգտում են այդ նպատակին հասնելու, տարաբաղդաբար խոհքով և ոչ գործքով, երկրորդ՝ հրջանից բոլորովին զուրկ այդ քաղաքի մէջ, երիտասարդների մտակ մթնոլորտինը կը լինի զարգարան-ընթերցարան։ Ներընտիր քաղաքացիի շնորհիւ բրինձը բաւական արժանացել է այստեղ։

—

Դեկտեմբերից մեզ հաղորդում են հետևեալ լուրը։ Ապրիլ ամսին Սուլդուզի Նաղադէյ գի գում մի քուրդ ոպանել է մի հայի, նոր ամուսնացած մի չահել երիտասարդի, հետևեալ պատճառից դրդուած։ Ոպանուոյ երիտասարդի փէսը եղբայրը մի ուրիշ գիւղում քրդացած է լինում և ամուսնանում է մի քուրդ աղջկայ հետ։ Իւր աղգին ու կրօնքին նախանձախնդիր Էլիասը (այդպէս է ոպանուոյի անունը) այս գատկին գնում է այն գիւղը, որտեղ որ քրդացած է եղել իւր եղբայրը, որ մի կերպով համոզէ՞ իւր եղբօրը և յետ բերէ։ Այդ յաջողւում է նորան և նա տանում է բերում իւր եղբօրը։ Բայց այն գիւղի ագան գըրգռուած այդ բանից թելադրում է իւր ռայաներից մէկին, որ գնայ փորը ճղէ այն յանդուգինը, որ համոզակեալ եկել ու տարել է ուժով(?) նորահասատ քուրդին։ Թելադրուած քուրդը սուտ բարեկամ ձևանալով դալիս է գիշերը մնում է Էլիասի տանը։ Գիշերը խմիր քնի մէջ վեր է կենում անիրաւ քուրդը դաշոյնի մի քանի հարուածով սպանում է նորան։ Հանգուցեալի բարեկամներն ու ազգականները այժմ այստեղ են, եկել են դանդատի։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՂԵՐԹԻՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

„Նոր-Դար“ լրագրից քաղում ենք հետևեալ լուրերը։ Մասկուայից Լ. Եպիսկոպոս Կոմիտէսի կանգնելը, որով Նորին Օնոլիքինը հրաւէր է կարդում մեր սփիւռքեալ եղբայրներին ազգութեան ձեռք պարպելու, պատրեղ և մեծ սիրով ընդունելու։ Մեծ. Փամհարեան եղբայրները, որ աղ հոտարակ ամեն մի ազգային գործի սիրով և առատ ձեռքով են վերաբերուում, իսկոյն և 1500 ր. փոխադրեցին Վ. Եպիսկոպոսին։

—Վարշաւից. Թէև այստեղի փոքրաթիւ հայ համայնքը վաղուց ուղարկած է Նորին Վ. Եպիսկոպոսը 400 ր. սովեալների օգտին, բայց այժմ կարդալով հայրապետական սրտաշարժ կոնդակը, նոյն նպատակով դարձեալ 700 ր. դրամ ժողովուեցաւ։ Այս կայ, որ գումարը 1000 ր. հասնի, որ և կուղարկուի Էջմիածին Վ. Եպիսկոպոսին։

—Ինչպէս գրումեն մեզ Շուշուց, մի յանձնաժողով է կազմուել այնտեղ սովեալների օգտին փող ժողովելու, որ պիտի ուղարկուի Վ. Հ. Հայրապետին։ Առայժմ հաւաքուած է 700 բուբլի։

—Թիֆլիսի կուսանաց մենաստանը Վ. Հ. Հայրապետին ուղարկել է 200 ր. սովեալների օգտին։

—Շաբաթ երեկոյեան, ապրիլի 30-ին Աստրախանի Գարեգին Ա. ընկեր. ձեռներէց յանձնեալ ուն ունեցաւ մասամբ սովեալների օգտին, երգեցողութեան մի երեկոյթ Կարա-Սուրզայի առաջնորդութեամբ։

Թէոդոսիա 21|2 մայիս 1894
Դրամական արժէքը (Բորսա)

			զուտ	շահի
Պարսկական	20 ղ.	էշրէֆին արժ.	32	—
»	10 »	» »	16	15
»	5 »	» »	8	—
Ռուսական	Ոսկին (ոսկին)	»	38	10
»	Մանէթը (բուբ.)	»	5	6
Անգլիական	Լիրան	»	48	—
Թրանսիսական	Ֆրանկը	»	2	1
Տաճկական	Մէճիդիէն	»	46	—

Խմբագիր-Հրատարակիչ՝ Անդրէաս Բէկնազարեանց։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հայկազեան երկսեռ վարժարանների բնեռութիւնները տեղի կունենան ըստ հետեւեալ ցուցակի։ Ամեն ցանկացող կարող է ներկայ լինել։ Կը սկսի առաւօտեան ժամը 8-ից մինչեւ 12-ը։

Երկուշաբթի 23 մայիսի. Կրօն I. և II. դասարան, Հայոց լեզու I. և II և նախակրթարան։

Երեքշաբթի 24 մայիսի. Օրիորդաց Կրօն, Հայոց լեզու, թուաբանութիւն Գրանսերէն։

Չորեքշաբթի 25 մայիսի. թուաբանութիւն I. և II. և նախակրթարան։

Ուրբաթ 3 յունիսի. Ընդհանուր աշխարհագրութիւն II. բնական պատմութիւն I. և II.

Երեքշաբթի 7 յունիսի. Ընդհանուր պատմութիւն և ռուսերէն II։

Ուրբաթ 10 յունիսի. Աշխարհագրութիւն I. և ռուսերէն I։

Ուրբաթ 17 յունիսի. Թրանսերէն I. և II. պարսկերէն I. և II։

Թիֆլիսի Հայկազեան երկսեռ դպրոցի համար հարկաւոր է մի ուսուցիչ, կրօնի, հայոց լեզուի, հայոց պատմութեան, թուաբանութեան եւ աղջիկների։

Մի վարժուհի, կար ու ձեռի, ձեռագործի, հայոց լեզուի, եւ թուաբանութեան։ Ամեն մէկը շաբաթական 26 ժամ դասով։ Պահանջում է կանոնաւոր դպրոցի վկայական։ Պայմանների համար դիմել „Շաւիղի“ խմբագրութեան։

ԼՈՅՍ ՏԵՍԱԼ

ԲԱՑԵԻ

ԱՐԾԻՒ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ

Հայրիկի պատկերով

ՈԱՅՑԻ դրքերից ցանկացողները կարող են դիմել ուղղակի հեղինակ այրիին,

Ազին հասցէն է. Տիֆլիս ԱՆՆԱ ՐԱՖՖԻ

Շուտով լոյս կը տեսնի „ԶԱՀՐՈՒՄԱՐ“ անտիպ և մեծ աշխատութիւնը։